



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵԳՆ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՈՒՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 5 Սեպտեմբեր 2021

231

DIMANCHE, Le 5 Septembre 2021



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Դ ԿԻՐԱԿԻ ՉԿՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յվննայե
Բարեկենդան Ս. Խաչի Պահոց

4^{ÈME} DIMANCHE APRÈS L'ASSOMPTION

Fête de la naissance de la Ste Vierge Marie,
issue de Ste Anne Prémices du Jeûne de la Ste Croix

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՐԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԿԵ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԵՆ (7.4-16)

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԵՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (7.31-37)

Les lectures de la Bible d'aujourd'hui

2 CORINTHIENS 7.4-16

MARC 7.31-37

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐՃ. Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Célébration et l'homélie:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան ժամերգութիւն - 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ - 10:30-ին

La Sainte Messe à – 10h30

Հոգեհանգիստ ժամը - 12:00-ին

Office de Requiem - 12h00

DIACRES – ACOLYTES

Organiste: Houry Manougian Bedrossian

Choeur Gomidas

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 7.4-16

4ՄԵԾ Է խօսքի համարձակութիւնս ձեզի հանդէպ, մեծ է ձեզմով պարծանքս, լեցուած եմ մխիթարութեամբ, չափազանց ուրախ եմ մեր ամբողջ տառապանքին մէջ:

5Որովհետեւ՝ երբ մենք Մակեդոնիա հասանք՝ մեր մարմինը բնա՛ւ անդորրութիւն չունեցաւ, այլ ամէն կողմէ կը տառապէինք. դուրսէն կռիւներ կային, իսկ ներսէն՝ վախեր: 6Բայց Աստուած, որ խոնարհները կը մխիթարէ, մեզ մխիթարեց Տիտոսի գալուստով: 7Եւ ո՛չ միայն անոր գալուստով, այլ նաեւ այն մխիթարութեամբ՝ որով ինք մխիթարուած էր ձեզմով, երբ պատմեց մեզի ձեր տենչանքը, ձեր կոծը, ինծի հանդէպ ձեր ունեցած նախանձախնդրութիւնը, այնպէս որ ա՛լ անելի ուրախացայ: 8Որովհետեւ, թէպէտ տրտմեցուցի ձեզ այդ նամակով, չեմ զոջար, (թէպէտ զոջացեր էի,) քանի որ կը նշմարեմ թէ այդ նամակը տրտմեցուց ձեզ, թէպէտ միայն ժամանակ մը: 9Ուրեմն կ'ուրախանամ, ո՛չ թէ քանի որ տրտմեցաք, հապա՛ որովհետեւ տրտմեցաք ապաշխարութեա՛ն համար. քանի որ տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, որպէսզի ոչինչ կորսնցուցած ըլլաք մեր միջոցով: 10Արդարեւ Աստուծոյ ուզած տրտմութիւնը կը պատճառէ՝ ապաշխարութիւն՝ փրկութեան համար, որ չի զոջացներ. բայց աշխարհի տրտմութիւնը կը պատճառէ մահ: 11Քանի դուք տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, ահա՛ այդ քանը ձեր մէջ ի՛նչ փութաջանութիւն գոյացուց, նոյնիսկ ջատագովութիւն, ընդվզում, վախ, տենչանք, նախանձախնդրութիւն, վրէժխնդրութիւն. ամէն կերպով դուք ձեզի հաւանութիւն տուիք թէ այդ խնդիրին մէջ անկեղծ էք: 12Ուրեմն ինչ որ գրեցի ձեզի, ո՛չ թէ անիրաւութիւնը ընողին պատճառով էր, եւ ո՛չ ալ անիրաւութիւնը կրողին պատճառով, հապա՛ որպէսզի երեւնայ ձեզի Աստուծոյ առջեւ մեր ունեցած փութաջանութիւնը ձեզի հանդէպ: 13Ուստի ձեր մխիթարութեամբ մենք մխիթարուեցանք. եւ ա՛լ անելի

ուրախացանք Տիտոսի ուրախութեան համար, որովհետեւ անոր հոգին հանգստացած էր բոլորէր. 14Քանի որ ամօթահար չեմ ըլլար՝ ձեզմով որեւէ բանի մէջ պարծենալուս համար անոր առջեւ. հապա, ինչպէս ամէն բան ճշմարտութեամբ խօսեցանք ձեզի, նոյնպէս Տիտոսի առջեւ մեր պարծանքն ալ ճշմարիտ գտնուեցաւ: 15Նաեւ իր գորովը աւելի առատ է ձեզի հանդէպ, մինչ կը վերոյիշէ ձեր բոլորին հնազանդութիւնը, թէ ի՛նչպէս ահով ու դողով ընդունեցիք զինք: 16Ուստի կ'ուրախանամ որ ամէն բանի մէջ վստահութիւն ունիմ ձեր վրայ:

ՎԵՏԱՐՎԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 7.31-37

31Դարձեալ Տիւրոսի եւ Սիդոնի հողամասերէն մեկնելով՝ գնաց Քալիլէայի ծովեզերքը, Դեկապոլիսի հողամասին մէջէն: 32Մէկը բերին անոր առջեւ, խուլ ու դժուարախօս, եւ կ'աղաչէին՝ որ ձեռք դնէ անոր վրայ: 33Բազմութենէն մէկդի առնելով զայն՝ իր մատները միտցն անոր ականջներուն մէջ ու թփնեց, եւ դպաւ անոր լեզուին. 34ապա երկինք նայելով՝ հառաչեց ու ըսաւ անոր. «Եփփաթա՛», (որ ըսել է՝ բացուէ՛.) 35Իսկոյն բացուեցան անոր ականջները եւ քակուեցաւ անոր լեզուին կապը, ու շիտակ կը խօսէր: 36Պատուիրեց անոնց՝ որ ո՛չ մէկուն ըսեն. սակայն ինք ո՛րքան կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ աւելի կը հրապարակէին: 37Չափազանց կ'ապշտէին ու կ'ըսէին. «Ան ամէն ինչ լաւ կ'ընէ. խուլներուն լսել կու տայ, եւ համբերուն՝ խօսիլ»:

2 Corinthiens 7.4-16

4J'ai une grande liberté envers vous, j'ai grand sujet de me glorifier de vous; je suis rempli de consolation, je suis plein de joie dans toute notre affliction. 5Car après être venus en Macédoine, notre chair n'a eu aucun relâche, mais nous avons été affligés en toutes manières; [ayant eu] des combats au dehors, et des craintes au dedans. 6Mais Dieu qui console les abattus, nous a consolés par la venue de Tite. 7Et non seulement par sa venue, mais aussi par la consolation qu'il a reçue de vous; car il nous a raconté votre grand désir, vos larmes, votre affection ardente envers moi; de sorte que je m'en suis extrêmement réjoui. 8Car bien que je vous aie attristés par mon Epître, je ne m'en repens point, quoique je m'en fusse [déjà] repent, parce que je vois que si cette Epître vous a affligés, ce n'a été que pour peu de temps. 9Je me réjouis [donc] maintenant, non de ce que vous avez été affligés, mais de ce que vous avez été attristés à repentance; car vous avez été attristés selon Dieu, de sorte que vous n'avez reçu aucun dommage de notre part. 10Puisque la tristesse qui est selon Dieu,

produit une repentance à salut, dont on ne se repent jamais; mais la tristesse de ce monde produit la mort. 11Car voici, cela même que vous avez été attristés selon Dieu, quel soin n'a-t-il pas produit en vous? quelle satisfaction? quelle indignation? quelle crainte? quel grand désir? quel zèle? quelle vengeance ? vous vous êtes montrés de toutes manières purs dans cette affaire. 12Quoi que je vous aie donc écrit, ce n'a point été à cause de celui qui a commis la faute, ni à cause de celui envers qui elle a été commise, mais pour faire voir parmi vous le soin que j'ai de vous devant Dieu. 13C'est pourquoi nous avons été consolés de ce que vous avez fait pour notre consolation; mais nous nous sommes encore plus réjouis de la joie qu'a eu Tite, en ce que son esprit a été recréé par vous tous. 14Parce que si en quelque chose je me suis glorifié de vous dans ce que je lui en [ai dit], je n'en ai point eu de confusion; mais comme nous vous avons dit toutes choses selon la vérité, ainsi ce dont je m'étais glorifié [de vous dans ce que j'en ai dit] à Tite, s'est trouvé être la vérité même. 15C'est pourquoi quand il se souvient de l'obéissance de vous tous, et comment vous l'avez reçu avec crainte et tremblement; son affection pour vous en est beaucoup plus grande. 16Je me réjouis donc de ce qu'en toutes choses je me puis assurer de vous.

Marc 7.31-37

31Puis [Jésus] étant encore parti des frontières de Tyr et de Sidon, il vint à la mer de Galilée par le milieu du pays de Décapolis. 32Et on lui amena un sourd qui avait la parole empêchée, et on le pria de poser les mains sur lui. 33Et [Jésus] l'ayant tiré à part, hors de la foule, lui mit les doigts dans les oreilles; et ayant craché, lui toucha la langue. 34Puis regardant vers le ciel, il soupira, et lui dit : Ephphatha, c'est-à-dire, Ouvre-toi. 35Et aussitôt ses oreilles s'ouvrirent, et le lien de sa langue se délia, et il parla aisément. 36Et [Jésus] leur commanda de ne [le] dire à personne; mais plus il le défendait, plus ils le publiaient. 37Et ils en étaient extrêmement étonnés, disant : il a tout bien fait; il fait ouïr les sourds, et parler les muets.





Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ՍԻՐԱԼԻՐ ԶՐԱԲԵՐ ԲՈԼՈՐԻՆ
CORDIAL INVITATION TO ALL



Հաճոյթով կը յայտնենք մեր հաւատացեալներուն թէ
շարունակաբար Եկեղեցին բաց է շաբթուան ընթացքին

Երկուշաբթիէն – Ուրբաթ

10:30-Էն մինչեւ կ.ե. ժամը 4:30

Շաբաթ – 11:00 – 3:00

Կիրակի- 9:30 – 2:00

Անոնք որոնք իրենց ուխտի կատարման համար կը փափաքին
այցելել Եկեղեցի, աղօթելու եւ մոմավառութեան համար, կրնան
շարունակել իրենց աստուածահաճոյ առաքելութիւնը:
Եկեղեցոյ դռները բաց են մեր բոլոր հաւատացեալներուն համար:

We are pleased to inform our faithful that during weekdays the

Church is open from:

Saturday - Friday

At 10:30 AM to 4:30 PM

Saturday – 11:00 AM – 3:00 PM

Sunday – 9:30 AM – 2:00 PM

Those who wish to visit the Church to fulfill their covenant,
pray, and light candles can continue their mission.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008 stgregorychurch@gmail.com

ՏՕՆԵՐ

Շաբաթ, Սեպտեմբեր 04, 2021

Նիկիոյ Սուրբ Ժողովի 318 Հայրապետներու Յիշատակութեան Օր

Քրիստոսի Եկեղեցւոյ պատմութեան մէջ առաջին Տիեզերական Ժողովը տեղի ունեցած է 325 թուականին, Կոստանդիանոս Մեծ կայսրի հրամանով, Կ. Պոլսոյ մօտ գտնուող Նիկիայ քաղաքին մէջ: Ժողովին կը մասնակցէին Ընդհանրական Եկեղեցւոյ 318 նշանաւոր հայրապետներ: Տիեզերաժողովի գումարման շարժառիթը Ալեքսանդրիոյ Արիոս անունով երեցն էր, որ կը քարոզէր, թէ Քրիստոս անսկիզբ չէ, այլ ստեղծուած է ժամանակներէն ու դարերէն առաջ Հայր Աստուծոյ ցանկութեամբ, որպէսզի անոր միջոցով կատարուի արարչագործութիւնը: «Միակ անձնունդը, միակ յաւիտենականը, միակ անսկիզբը Հայր Աստուած է: Որդին յառաջացած է ոչ թէ Հօր Էութենէն, այլ ոչինչէն: Կար ժամանակ, երբ Որդին չի կար: Որդին թէեւ ստացած է Հայր Աստուծոյ ողջ շնորհքը եւ որդեգրուած, սակայն անապական չէ, ինչպէս Հայրը, այլ այլայլելի, ինչպէս արարածները», - Արիոսի այս դատողութիւններուն պատճառով փաստօրէն կը մերժուէր Քրիստոսի Աստուածութիւնը՝ վտանգի տակ դնելով ողջ քրիստոնէական վարդապետութիւնը: Արիոսականութեան դէմ դուրս կու գայ Ալեքսանդրիոյ Ալեքսանտր արքեպիսկոպոսը: Ան իր քարոզներուն մէջ կը շեշտէր, որ յաւիտենական է Աստուած, յաւիտենական է եւ Որդին, Հայրը եւ Որդին միաժամանակ գոյութիւն ունին: Հայրը Որդիին չի նախորդեր ոչ մէկ վայրկեան, միշտ եղած է Հայրը, միշտ եղած է Որդին: Այս Տիեզերաժողովին կը դատապարտուի Արիոսի մոլորութիւնը՝ յայտարարելով այն հերետիկոսութիւն: Նիկիոյ Ա Տիեզերաժողովին կը մասնակցէր նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի որդին՝ Արիստակէսը: Ժողովին ընդունուած դաւանաբանական բանաձեւը, որ յայտնի է Նիկիական հանգանակ անունով, Ս. Արիստակէս Հայրապետը Հայաստան բերած եւ ներկայացուցած է հօրը՝ Ս Գրիգոր Լուսաւորիչին: Վերջինս ալ անոր ակեցուցած է. «Իսկ մեք փառաւորեսցուք...» հատուածը: Նիկիոյ մէջ ընդունուած Հաւատոյ հանգանակն ու Լուսաւորիչին ակեցուցած հատուածը մինչեւ այսօր ալ անփոփոխ կ'օգտագործեն Հայ Եկեղեցւոյ ծիսակարգին մէջ: Արիստակէսը իր հետ Հայաստան բերած էր նաեւ

Նիկիոյ ժողովին մէջ ընդունուած 20 կանոնները, որոնք Նոյնպէս հաստատուած են Ս. Գրիգոր Լուսաւորիչին կողմէ:

HOLIDAYS

Saturday, September 4, 2021

Commemoration of 318 Pontiffs participating in the Ecumenical Council of Nicaea

This council is the First Ecumenical Council in the history of the Church, which was convened upon the order of the King Costandianos the Great in the town Nicaea near Constantinople, in 327 A. D. 318 prominent pontiffs representing the Universal Church participated in the Council. The reason for convening the council was priest Arios of Alexandria, who preached that Christ was not without beginning, that he was created upon the Will of God before times and centuries, in order the creation of God to be realized by means of Christ. The only one not having birth, the only one eternal and without beginning is God the father. Son has been created not from the essence of the Father, but from nothing. There was a time when the Son did not exist. Although the Son has received all the virtues of the Father and is adopted, he is not pure as the Father is, he is changeable, as all human beings.

Because of such viewpoints of Arios the Divinity of Christ was denied and the entire Christian doctrine was endangered. Archbishop Alexander of Alexandria opposed to Arianism. In his sermons he stressed that God is eternal, and Son is eternal, Father and Son are of the same time. Father does not precede the Son even for a moment, Father has always existed, and Son has always existed. The false teaching of Arios is condemned during the first Ecumenical Council and it is declared to be heresy.

Aristakes, son of St. Gregory the Illuminator, also participates in the first Ecumenical Council. The doctrinal formulation adopted by the Council, which is known as Nicene Creed, is brought to Armenia by Aristakes and is presented to St. Gregory the Illuminator. The latter added to it the following passage: “As for us, we shall glorify him who was before the

ages, worshipping the Holy Trinity and the one Godhead, the Father and the Son and the Holy Spirit, now and always and unto ages of ages. Amen.”

The Nicene Creed, adopted in Nicaea, and the passage added by St. Gregory the Illuminator, are up to date used in the rites of the Armenian Apostolic Church without any change. Aristakes brings to Armenia also 20 canons adopted by the Council of Nicaea, which are also ratified by St. Gregory the Illuminator.



Շաբթուայ խորհրդածուրթիւններ

«Աշխարհի մէջ մարդիկ կան, որոնք կ'ապրին միայն իրենց համար, մարդիկ կան, որոնք կ'ապրին ուրիշներուն համար, մարդիկ ալ կան, որոնք կ'ապրին տանջուողներուն օգնելու համար: Եւ, աւա՛ղ, ամենէն քիչը միայն անոնք են աշխարհի մէջ»:

Յովհաննէս Թումանեան

Աշխատանքը այն հանճարն է, որ աշխարհիս տգեղութիւնը գեղեցկութեան կը փոխէ:

Աշխատանքն է, որ մեծ անեծքը կը փոխէ մեծ օրհնութեան:

Այսուհետեւ, աշխարհիս տերերը աշխատանքն ու գիտութիւնն են:

Մեր առաջին պարտականութիւնը աշխատանքն է, երկրորդը՝ բարութիւնը:
Ֆրանսիսք Սարսէ

Աշխատանքի պարգեւին, վարձատրութիւնը ոչ թէ հանգիստն է, այլ աւելի շատ աշխատանքը:

Ծուլութիւնը կրնայ հրապուրիչ թուայ, սակայն աշխատանքն է,

որ բաւարարուածութիւն, գոհութիւն կու տայ:
Աննէ Ֆրանկ

Երեւակայութիւնը աւելի կարեւոր է, քան գիտելիքները:

Գիտելիքները սահմանափակ են, երեւակայութիւնը՝ անսահման:

Ալպերթ Այնշթայն

Եթէ կը ցանկաք երջանիկ ապրիլ, ապա պէտք է կապուած ըլլաք ձեր նպատակներուն եւ ոչ թէ՛ մարդոց եւ իրերուն:

Ալպերթ Այնշթայն

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅՈՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար
Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC

Donations of August / September 2021 have been received with great appreciation.

CHURCH:

Mrs. Jeanette Sabounjian \$50

FOR A VOW:

Mr. Garo Telfeyan \$100

FEAST OF ASDVATZAIN:

GRAPES BLESSING:

Mrs. Asdghig Yazedjian \$30

HOKEHANKISD (Requiem Services)

IN MEMORY OF:

THE LATE VAHAN SONMEZ:

Mr. Aret Sonmez \$300

THE LATE DN. ONNIK KALOUSTIAN:

Mrs. Emma Kaloustian \$100

THE LATE ANAHID SAHAGUIAN:

Mr. & Mrs. Barkev & Arpi Nazaretian \$100

Ms. Adrig Sahaguian \$100

THE LATE KOHAR & VAGHARSHAG AZATYAN:

Mrs. Haykuhi Bakalian \$20



Ա. ԽՈՐԱՆԻ ԾԱՐԻԿՆԵՐ

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին Ս. Խորանին ծաղիկներ նուիրել կրնան հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066:

ALTAR FLOWERS:

Parishioners who wish to donate flowers for the Holy Altar are asked to call the Church office (514) 279-3066.

Առցանց նուիրատուութիւններու համար
հաճեցէք սեղմել ներքոյնշեալ կապը.-

For online donations please click the link below:

saintgregory.ca



Շնորհակալութիւն ձեր նուիրատուութեան համար:
Thanks for your donation!

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021

OFFICE DE REQUIEM

Dimanche, Le 5 Septembre 2021



Առաջնորդ սրբազան հոր թելադրանքով եւ նախաձեռնութեամբ
Եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ ծխական խորհուրդին
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի՝

Նորօգ հանգուցեալ

Տ. ՄԱՂԱՔԻԱ ՎՐԴ. ԱՄԻՐՇԱՆԻ

հոգւոյն ի հանգիստ:



Տիկ. Տիրուկի Տրդատեանի

Տիկ. Էմմա Գալուստեանի

Տիկ. Զէլէն Մելքոնեան Գալայճեանի
խնորանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի

իրենց սիրեցեալ հարազատներուն՝

ՕՆՆԻԿ ՍՐԿ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

(DN. ONNIK KALOUSTIAN)

մահուան 8-րդ տարելիցին առիթով:

ԺԱՆ ՏՐԴԱՏԵԱՆԻ

(JEAN DERTADIAN)

մահուան 3-րդ տարելիցին առիթով:

ՏԻԳՐԱՆ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ

(DIKRAN KALAYJIAN)

մահուան 21-րդ տարելիցին առիթով:

ԱՆԺԷԼ ԵՒ ՏԻՐԱՆ

ԳԱԼԱՅՃԵԱՆՆԵՐՈՒ

(DIKRAN KALAYJIAN)

մահուան 22-րդ տարելիցին առիթով:

Ինչպէս նաեւ՝

ԳԱԼԱՅՃԵԱՆ, ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, ՏՐԴԱՏԵԱՆ,

ՊԱՐՈՆԻՔ, ԿԵՕՆՃԵԱՆ, ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԵՒ ԳԱՓՎԱՔՃԵԱՆ

գերդաստաններու համայն ննջեցելոց

հոգիներուն ի հանգիստ:



Մարի, Վարդան Իսրայելեան-ճերահեան
Ատի, Ժիրո Իսրայելեան-ճերահեան
Կապրիելլա, Սթիւ, Եազմին, Տանելլա,
Ալին, Մարգ, Սէլին, Ալէսանտրա, Իլիաս,
Կրէկ, Սանտրա, Ալիս, Քիրա, Քրիսթին, Նիք եւ Միլօ
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ՝
մօր, մեծ մօր եւ մեծ մեծ մօր՝

ՌԵՆԱԹՎ ՊԱՍՕ-ԻՍՐԱԷԼԻԱՆԻ
(RENATA BASO-ISRAELIAN)

մահուան 40-ին առիթով:



Պօղոսեան եւ Յովհաննէսեան
ընտանիքներու խնդրանքով հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ
քրոջ, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

Նորոգ հանգուցեալ՝
ԱՐՏԵՄԻՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ
(ARDEMIS OHANNESIAN)

(մահացած Պէյրուզ, Լիբանան)
հոգւոյն ի հանգիստ:



ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ



ԱՐՈՔ

ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՐՈՒԹԵԱՆ



ԱՐՈՔ ԽԱՂԱՐՈՒԹԵԱՆ

Քու խաղաղութիւնով,
ով Քրիստոս Փրկիչ մեր,
որ մտքէ ու խելքէ շատ վեր է,
ամուր եւ անվախ պահէ զմեզ ամէն չարութենէ.
Խաւասարէ զմեզ քու ճշմարիտ երկրպագումներուդ հետ,
որք հոգով եւ ճշմարտութեամբ
քեզ երկրպագողօրն կ'ընեն.


Վասն զի Ամենասուրբ երրորդութեանդ
կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ.
այժմ եւ միշտ, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան.

Ամէն:

PRIÈRE POUR LA PAIX

Christ, notre Sauveur,
dans ta paix qui dépasse toutes pensées et paroles,
fortifie-nous et garde-nous sans peur devant tout mal;
mets-nous aurang de tes vrais adoreteurs,
qui t'adorent en esprit et en vérité,
car à la très Sainte Trinité
conviennent la gloire, la souveraineté et l'honneur,
maintenant et toujours et pour l'éternité de l'éternité.
Béni soit notre Seigneur, Jésus-Christ.

Amen.



ՏՕՆԱՑՈՅՑ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐ – SEPTEMBRE

6, Երկուշաբթի – Ա. օր խաչի պահոց:
Lundi 6 – 1^{er} jour du jeûne de la Ste Croix.

7, Երեքշաբթի – Բ. օր խաչի պահոց:
Mardi 7 – 2^{ème} jour du jeûne de la Ste Croix.

8, Չորեքշաբթի – Գ. օր խաչի պահոց:
Mercredi 8 – 3^{ème} jour du jeûne de la Ste Croix.

9, Հինգշաբթի – Դ. օր խաչի պահոց:
Jeudi 9 – 4^{ème} jour du jeûne de la Ste Croix.

10, Ուրբաթ – Ե. օր խաչի պահոց:
Vendredi 10 – 5^{ème} jour du jeûne de la Ste Croix.

11, Շաբաթ – Տօն Սրբոյ Եկեղեցւոյ ի նաւակատիս
Սրբոյ խաչին:

Samedi 11 – Fête de la Ste Église,
veille de la Ste Croix.



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՂՈՅՔ



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Չորեքշաբթի, 8 Սեպտեմբեր 2021

Երեկոյեան ժամը 5:00-ին:

Արժ. Տ. Դավիթ Քինյ. Մարգարեանի հետ:

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից
ըլլալու երեկոյեան ժամերգութեան առցանց եկեղեցոյ դիմատետրի էջով:

«Եւ այսպէս ըրէք, գիտնալով թէ ժամանակն է, որ թունեն արթնանաք.
վասն զի հիմա մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ
հաւատացինք» (Յոռմ. 13:11):

Աղօթաբոյր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ հաւատացեալներուն:

SERVICE DU SOIR ET PRIÈRE DE GUÉRISON

avec le R.P. David Margaryan

Mercredi, le 8 Septembre 2021 à 17h00.

**Nous invitons nos chers fidèles à participer
à service du soir via la page Facebook de l'Église.**

“Cela importe d'autant plus que vous savez en quel temps nous
sommes: c'est l'heure de vous réveiller enfin du sommeil, car
maintenant le salut est plus près de nous que lorsque nous avons cru”
(Romans 13 :11).

Nous souhaitons des moments de prière à nos fidèles.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճար
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՀՈԳԵՒՈՐ ՉՐՈՅՑ

CONVERSATION SPIRITUELLE



Չորեքշաբթի, 8 Սեպտեմբեր 2021

Երեկոյեան ժամը 6:30-ին

Արժ. Տ. Դաւիթ Քհլյ. Մարգարեանի հետ:

Մեր սիրելի հաւատացեալները կրնան մասնակցիլ
Zoom ծրագիրի միջոցաւ:

Zoom ծրագիրի մասնակցութեան կապը ստանալու
համար հաճեցէք հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝
(514)279-3066:

Mercredi, Le 8 Septembre 2021 à 18h30

avec le R.P. David Margaryan

Nous invitons nos chers fidèles peuvent participer à
travers le
programme Zoom.

Pour obtenir le lien pour participer au programme Zoom
veuillez appeler le bureau de l'Église au (514)279-3066.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՏՕՆ

ԽԱԶՎԵՐԱՅ

FÊTE MAJEURE DE L'EXALTATION
DE LA SAINTE CROIX



LIVE

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**ՏԱՂԱԲԱՐ ՏՕՆԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ
LA SAINTE MESSE DE LA FÊTE MAJEURE**

Կիրակի, 12 Սեպտեմբեր 2021
Dimanche, 12 Septembre 2021

ՊԱՏԱՐԱԳԻՉ ԵՒ ՔԱՐՈՉԻՉ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԶՅՆՅ. ՍԱՐԳՍԻՆԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻ

CÉLÉBRATION ET L'HOMÉLIE

RÈV. PÈRE DAVID MARGARYAN
PRÊTRE PAROISSIAL

Առաւօտեան ժամերգութիւն - Matines à
09:30

Ս. Պատարագ - Sainte Messe 10:30
Ռեհանի օրհնութիւն - Bénédiction de basilic
12 -12 :30

Յաւարտ Ս. Պատարագի

**ՄԱՏԱՂՈՐՀՆՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԲԱՇԽՈՒՄ**

Եկեղեցւոյ բակին մէջ:

BÉNÉDICTION

MADAGH ET DISTRIBUTION

Dans la cour de l'Église

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
SAINT GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
CATHEDRAL OF MONTREAL



Կիրակի, 12 Սեպտեմբեր 2021 Խաչվերացի
տաղաւար տօնն է, այս առիթով հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի տօնին յաջորդող օրը
ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

**Երկուշաբթի, 13 Սեպտեմբեր 2021
առաւօտեան ժամը 11:00-ին:**

Հաւատացեալներ, որոնք կը փափաքին հոգեհանգստեան
պաշտօն ինդրել եւ մասնակցիլ
Երկուշաբթի ննջեցելոց յիշատակութեան օրուան առիթով
կրնան դիմել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066:

On Sunday, September 12, 2021, is a major feast of the
Exaltation of the Holy Cross, on this occasion
the requiem services will be held on the
**REMEMBRANCE DAY OF THE DEAD
MERELOTZ - REQUIEM SERVICES**

Monday, September 13, 2021, at 11:00 AM

Our parishioners who wish to schedule a requiem service for
Monday Remembrance Day of the Dead (Merelotz) can contact
the Church office at (514)279-3066.



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Եթե ունիք հասցեի, հեռաձայնի
կամ e-mail-ի փոփոխություն, հաճեցեք ձեր նոր
տուեալները փոխանցել Եկեղեցույ
քարտուղարության
(514) 279-3066:



Si vous avez un changement d'adresse, courriel ou
numéro de téléphone, s'il-vous-plait, veuillez
informer de vos nouvelles informations au
Secrétariat de l'Église (514) 279-3066.

If you have any changes in your address, e-mail or
phone numbers please do not forget to inform us
call at (514) 279-3066.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/

stgregorychurch@gmail.com



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՄՈՆՏՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէպէք նահանգի իշխանութեան, առողջապահական կառոյցներու յայտարարութեան եւ Գանատահայոց Թեմի հրահանգներուն՝ կանխարգիլելու համար թագածահրի Covid-19 տարածման վտանգը, **ներկայիս Քէպէք նահանգը անցնելով կանաչ գօտիի, որուն համաձայն կը կիրարկուի հետեւեալ համակարգը .-**

- Սկրտութիւններու, պսակադրութիւններու եւ յուղարկաւորութիւններու պարագային **արտօնուած է առաւելագոյնը 250 հոգիի ներկայութիւն:** Դիմակները կրնան հեռացուիլ, երբ մարդիկ նստած են: Միեւնոյն հասցէին չքնակող մարդկանց միջեւ հեռաւորութիւնը պէտք է յարգուի:

- Եկեղեցոյ Կիրակնօրեայ Ս. Պատարագներուն, ժամերգութիւններուն եւ մնացեալ արարողութիւններուն **առաւելագոյնը 250 հոգիի ներկայութիւն:**

📍 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Մնացեալ հարցերու համար կրնաք դիմել՝
Հոգեւոր Հովիւին, հեռ. (514) 448-2809:

Ճեզ կը մտղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԿ

IMPORTANT NOTICE

We would like to inform our parishioners that following the Quebec State Authority, a statement from health care providers, and instructions from the Armenian Diocese of Canada to prevent the spread of Covid-19,

Quebec currently is in the green zone,

as of according to new guidelines will be as follows:

- **Up to 250 people are allowed** in the case of baptisms, marriages & funeral., the Face coverings or masks can be removed when people are seated. Distancing between people who do not reside at the same address must be respected.
- Church Sunday Liturgies, prayer services, and other ceremonies the attendance **is allowed a maximum of 250 people.**

📍 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

For other questions, you can contact the Parish Priest tel. (514) 448-2809.

We wish you good health and all the best and hope to keep you informed in writing of any changes or other details.

CHURCH OFFICE



ՄՈՆՏՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԿԱԿՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

Note Importante

Nous vous informons chers croyants que conformément aux directives du gouvernement du Québec, après la déclaration des autorités de santé publique et des instructions du diocèse de l'Église apostolique arménienne au Canada, pour empêcher la propagation du virus de Covid-19,

le Québec est présentement dans la zone verte, en date du selon l'Église selon les nouveaux directeurs actuels sera la suivante :

- **Jusqu'à 250 personnes sont autorisées** en cas de baptême, mariages et Funérailles. Les couvre-visages ou les masques peuvent être retirés lorsque les personnes sont assises. La distanciation entre les personnes qui ne résident pas à la même adresse doit être respectée.
- Liturgies du dimanche de l'Église, services de prière et autres cérémonies, la participation maximale **est autorisée une capacité maximale de 250 personnes.**

 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Pour toutes autres questions, vous pouvez
contacter le prêtre au tel: (514) 448-2809

Nous vous souhaitons surtout de bonne santé et le meilleur et espérons vous tenir informé par écrit de tout changement ou d'autres détails.

BUREAU DE L'ÉGLISE



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՂԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

**CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ / ATTENTION

Սիրելի հաւատացեալներ
Ձեր ազնիւ ուշադրութեան կը յանձնեմք թէ
առժամաքար Bernard փողոցին վրայ գտնուող
"Centre d'Éducation des Adultes Outremont" դպրոցի կայանատեղին (parking)
շինարարութեան պատճառով գոցուած է մինչեւ տր ւտօրինութիւն:
Շնորհակալութիւն



PARKING

Our beloved parishioners!

We bring to your attention that the parking lot of the Center d'Éducation des Adultes Outremont that have been located on the Bernard street temporarily has been closed due to construction.

We will inform you until the new administration. Thank you!

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2